ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսուցիչներ,
Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ: Կրթությունն անձի կայացման կարևորագույն նախապայմանն է, և այդ գործում ձեր ներդրումն անգնահատելի է: Ուսուցչի առաքելությունն առանձնահատուկ է. այն ուղղված է ոչ միայն սերունդներին կրթելուն, այլ նաև անձի ձևավորմանն ու զարգացմանը, գիտակից հասարակության կայացմանը: Ձեր ամենօրյա հետևողական և նվիրումով աշխատանքն ու հաղորդակցությունը սերունդների հետ արժեքավոր ներդրում է մեր համայնքի կրթական ու հասարակական կյանքի զարգացման գործում: Ուսուցչի մասնագիտական բարձր պատասխանատվությունն ու նվիրվածությունն արժանի են խորին հարգանքի և գնահատանքի: Միանշանակ, ձեր աշխատանքի արդյունքը ոչ միայն ներկայի,այլ նաև ապագայի արտացոլանքն է: Համոզված եմ, որ գործունության տարբեր ոլորտներում հպարտանալու ենք վեհ արժեհամակարգ կրող մեր սերունդներով: Սիրելի՛ ուսուցիչներ, մաղթում եմ ձեզ մասնագիտական ու աշխատանքային նոր ձեռքբերումներ ու հաջողություններ, հետաքրքիր ու արգասաբեր աշխատանք՝ ի նպաստ մեր հայրենիքի ու համայնքի: Թող ձեր սաների առաջընթացը դառնա ձեր աշխատանքի լավագույն արդյունքն ու գնահատականը: